



ՀԱՆՐԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ALISO CANYON ՀԱՃԱԽԱԿԻ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ

2015թ. հոկտեմբերի 23-ից SoCalGas®-ը աշխատում է՝ դադարեցնելու գազի արտահոսքը Aliso Canyon պահեստային տարածքի բնական գազի պահեստային հորից: Մենք հասկանում ենք, որ արտահոսքը մտահոգությունների, բարձր իրազեկման և հանրային հրատապության պատճառ է դարձել: Մենք շահագրգռված ենք դադարեցնել գազի արտահոսքի հետևանքով համայնքի և շրջակա միջավայրի վրա առաջացած շարունակական ազդեցությունը: Մենք կազմել ենք աշխարհում լավագույն մասնագետների մի թիմ և աշխատում ենք հնարավորինս արագ և անվտանգ՝ արտահոսքը դադարեցնելու համար:

Դեկտեմբերի 4-ին մենք սկսեցինք օժանդակ հորի հորատումը, որը կհաստի արտահոսող հորի հետ: Երբ արտահոսող և օժանդակ հորերը հատվեն, պոմպով հեղուկ կլցվի՝ բնական գազի հոսքը կանգնեցնելու համար: Որից հետո պոմպով ցեմենտ կլցվի հորի հատակին՝ մշտապես այն փակելու համար:

Ակնկալվում է, որ օժանդակ հորի հորատումը կհասնի հորի հատակին՝ 8500 ֆուտ խորության վրա, հաջորդ ամիս: Երբ արտահոսող հորը փակվի, այն վերջնականապես կհանվի շահագործումից: Ներկայումս մենք մտնում ենք գործունեության հինգերորդ փուլ և ընթանում ենք ժամանակացույցից առաջ:

ՀԵՏԵՎՅԱԼՆԵՐԸ ՄԵՋ ՏՐՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՊԱՏԱՍՄԱՆՆԵՐՆ ԵՆ՝

Գազի արտահոսքը վնասակա՞ր է շնչառության համար:

2016թ. հունվարի 14-ին Կալիֆորնիայի Շրջակա միջավայրի պաշտպանության գործակալության Շրջակա միջավայրի առողջության վտանգների գնահատման գրասենյակը (Office of Environmental Health Hazard Assessment, OEHHA) նշել է, որ “բենզոլի գրեթե բոլոր չափված խտությունները արտահոսքի ընթացքում Porter Ranch համայնքում համապատասխանում են Լոս Անջելեսի տարածքում հիմնականում գրանցված ֆոնային մակարդակներին, ներառյալ Բրբանկում տեղակայված ամենամոտ երկարատև մոնիտորինգի կայանում:”

2016թ. հունվարի 15-ին Հարավային ափի օդի որակի կառավարման բաժինը հրապարակեց Առողջության վրա ակնկալվող ազդեցությունների նախնական գնահատման տվյալները, որի եզրակացությունն էր. “արտահոսող գազի ազդեցության մակարդակը համայնքի վրա չի ակնկալվում, որ կունենա առողջության վրա ավելի մեծ վտանգ Հարավային Կալիֆորնիայում դրսի օդի մեջ պարունակվող օդի թունավոր աղտոտիչներից կարճաժամկետ կամ երկարաժամկետ ազդեցությունից:”

SoCalGas®-ը շարունակում է աշխատել քաղաքի, վարչաշրջանի և նահանգի օդի որակի գործակալությունների հետ՝ Porter Ranch համայնքի տասն դիտարկման կայաններից օրը երկու անգամ վերցնելու համար օդի նմուշները, և այն դիտարկման ծրագրին ավելացրել է վեց 12-ժամյան նմուշառումներ համայնքին մոտ գտնվող հիմնարկի պարագծով մեկ: Ընդհանուր առմամբ, օդի նմուշառման տվյալները ցույց են տալիս բենզոլի մակարդակներ, որոնք համահունչ են Լոս Անջելեսի տարածքում չափված ֆոնային մակարդակների հետ: Օդի որակի գործակալությունները նշել են, որ այսպիսի ցածր մակարդակներում առողջության վրա սուր կամ երկարատև ազդեցություններ չեն ակնկալվում:

Օդի նմուշառման արդյունքները հրապարակված են հանրության ուսումնասիրության համար AlisoUpdates.com կայքի Environmental Concerns (Բնապահպանական մտահոգություններ) էջում:



Ինչպե՞ս կարող եմ դիմել օդի ֆիլտրացիայի կամ օդի մաքրման առաջարկների համար:

Բնակիչները, ում անհանգստացնում է հոտի առկայությունը, կարող են դիմել անվճար առաջարկվող օդի ֆիլտրացիայի և օդի մաքրման համակարգերի համար: Տեղադրման համար գրանցման համար խնդրում ենք ներկայացնել դիմումները AlisoUpdates.com կայքի Need Assistance (Աջակցության կարիք) էջում: Կարող եք նաև զանգահարել Aliso Canyon-ի թեժ գծին՝ 818-435-7707 համարով կամ անձամբ ներկայանալ Համայնքային ռեսուրսների կենտրոն հետևյալ հասցեով՝ 19731 Rinaldi Street, Los Angeles, CA 91326:

Իսկ եթե ես ցանկանում եմ վերաբնակեցվել՞:

SoCalGas-ը ժամանակավոր կացարաններ է տրամադրում Porter Ranch-ի այն բնակիչների համար, ովքեր ցանկանում են վերաբնակեցվել: Մենք նաև հեշտացրել ենք փոխհատուցման դիմումների գործընթացը: Իրավունակ բնակիչները հիմա կարող են անդամագրվել առցանց՝ մղոնների և սննդի համար փոխհատուցում ստանալու համար:

Վերաբնակեցման և փոխհատուցման վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք AlisoUpdates.com կայքը Need Assistance (Աջակցության կարիք) էջում: Դուք կարող եք զանգահարել նաև 877-238-9555 համարով և Հետախոսային սպասարկման կենտրոնի ներկայացուցիչը կգրանցի Ձեր տեղեկությունները և Վերաբնակեցման թիմից մեկը Ձեզ հետ կապ կհաստատի:

Ի՞նչ է անում SoCalGas-ը՝ կրճատելու համար գազի արտահոսքը:

Մինչ մենք հորատում ենք օժանդակ հորը, SoCalGas-ը ջանքեր է գործադրում փարատելու համար Porter Ranch-ի բնակիչների մտահոգությունները, ինչպես նաև կրճատելու շրջակա միջավայրի վրա ակնկալվող ազդեցությունը: Մենք որոշակի քայլեր են ձեռնարկել՝ կրճատելու համար հորից արտահոսող գազի քանակը և նվազեցնելու համայնքին հասնող հոտը: Այս ջանքերը ներառում են պահեստային ռեզերվուարի ճնշման նվազեցումը և անվճար ամբողջ տան օդի մաքրման և էլեկտրական սնուցմամբ օդի մաքրման համակարգերի տրամադրումը, որոնք պարունակում են ակտիվացված բնածուխ, որը նախատեսված է կրճատելու տներից գազի հոտը: SoCalGas-ը կշարունակի հետևել հորի ճնշմանը 24/7՝ վստահ լինելու համար, որ այն շարունակում է անվտանգ մնալ:

Ինչու՞ է օժանդակ հորի հորատումը այսքան երկար տևում:

Օժանդակ հորի գործընթացը ներառում է գործիքի ուղղորդում՝ գտնելու համար յոթ դյույմանոց հողովակը ավելի քան հազար ֆուտ հեռավորության և հազարավոր ֆուտ խորության վրա: Մագնիտներ կօգտագործվեն տեղորոշելու համար արտահոսող հորը: Մենք շարունակում ենք մեծ առաջխաղացումներ ունենալ օժանդակ հորի հորատման գործում: Ներկայումս մենք մտնում ենք գործունեության հինգերորդ փուլ և ընթանում ենք ժամանակացույցից առաջ: Սա ամենաերկար և ամենից սխտեմատիկ փուլն է՝ անվտանգությունն ու ճշգրտությունը պահպանելու համար: Հինգ փուլանոց գործընթացի վերաբերյալ տեսանյութ դիտելու համար այցելեք AlisoUpdates.com կայքը What We Are Doing (Ինչ ենք մենք անում) բաժնում:

Ինչի՞ համար է մեզ հարկավոր այս պահեստային հիմնարկը:

Որպես SoCalGas-ի համակարգի ամենամեծ պահեստային հիմնարկ, Aliso Canyon-ը SoCalGas-ին թույլ է տալիս մատչելի գնով և անխափան կերպով ծառայություններ մատուցել մեր հաճախորդներին համակարգի տարբեր պայմաններում: Մեծ և փոքր հաճախորդները կարող են խուսափել առաջարկի դեֆիցիտի խնդիրներից, գների ժամանակավոր բարձրացումներից, խողովակաշարի անսարքությունից և համակարգի այլ խնդիրներից՝ Aliso Canyon-ում պահեստավորելով և այնտեղից մատակարարելով բնական գազը: Քանի որ Aliso Canyon-ը ուղղակիորեն գազ է մատակարարում LA Basin-ին, դրա նպաստները հատկապես կարևոր են Լոս Անջելես վարչաշրջանի և նրա հարակից տարածքների հաճախորդների համար: Սա ներառում են էլեկտրական գեներատորները, որոնք ծառայում են LA Basin-ին, որոնք հիմնականում աշխատում են բնական գազով:

Որտեղի՞ց կարող եմ լրացուցիչ տեղեկություններ ստանալ:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք AlisoUpdates.com: Եթե հարցեր կամ մտահոգություններ ունեք, կարող եք զանգահարել նաև 24-ժամյա թեժ գծին՝ 818-435-7707 համարով, էլ նամակ ուղարկել aliso.canyon@socialgas.com հասցեով կամ այցելել մեր նոր Համայնքային ռեսուրսների կենտրոն՝ 19731 Rinaldi Street, Porter Ranch Town Center:

